ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.՝060-28-94-09
էլ.փոստ .՝ dzorackbyur@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 Հոկտեմբերի 2017 թվականի N 125

## ԳՐԻԳՈՐԻ ՍՏԵՓԱՆԻ ԲԵԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10,11,22.1-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գրիգորի Բեկյանին սեփականության իրավունքով պատկանող, Կոտայքի մարզ Ձորաղբյուր այգետարածքի թիվ 24 զնգ. թիվ 23 հասցեում գտնվող հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գրիգորի Ստեփանի Բեկյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ Ձորաղբյուր այգետարածքի թիվ 24 զնգ. թիվ 23 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված S=33.2քմ «ինքնակամ բն. տունը»; S=9.7քմ «ինքնակամ բաց պատշ.-ը», S=3.7քմ «ինքնակամ ա/հարթակը», S=28.4քմ «ինքնակամ բն. տունը», S=12.6քմ «ինքնակամ հարթակը», S=1.3քմ «ինքնակամ աստիճանը», S=33.1քմ «ինքնակամ բն. տունը», S=12.1քմ «ինքնակամ ա/հարթակը», S=10.3քմ «ինքնակամ լողավազանը» և S=1.4քմ «ինքնակամ զուգարանը» համարել օրինական՝ հիմք ընդունելով «ԱԼԲԻՈՍՖ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հատակագիծը:

2. Հաշվի առնելով, որ ինքնակամ կառույցը կառուցվել է 2001 թվականի մայիսի 15-ից առաջ, ինքնակամ շինության օրինականացման համար վճար չի գանձվում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.՝060-28-94-09
էլ.փոստ .՝ dzorackbyur@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 Հոկտեմբերի 2017 թվականի N 126

## ԱՐՏԱԿ ՍՈՒՐԵՆԻ ՈՍԿԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10,11,13,22.1-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը,որ Արտակ Սուրենի Ոսկանյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ Ձորաղբյուր այգետարածքի թիվ 39 տեղամաս թիվ 20 հասցեում գտնվող հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Արտակ Ոսկանյանին սեփականության իրավունքով պատկանող Ձորաղբյուր այգետարածքի թիվ 39 տեղամաս թիվ 20 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված, S=174.98քմ <<ինքնակամ այգետնակը>>, S=6.69քմ <<ինքնակամ աստիճանավանդակը>>, S=43.07քմ <<ինքնակամ ծածկը>>, S=16.72քմ <<ինքնակամ ծածկը>>, S=0.8քմ <<ինքնակամ պարիսպը>>, S=4.37քմ <<ինքնակամ աստիճանավանդակը>>, S=2.97քմ <<ինքնակամ աստիճանավանդակը>>, S=8.53քմ <<ինքնակամ հենապատը>>, S=8.53քմ <<ինքնակամ հենապատը>>, S=2.42քմ <<ինքնակամ հենապատը>>, S=4.12քմ <<ինքնակամ հենապատը>> և S=0.71քմ <<ինքնակամ պարիսպը>> համարել օրինական, հիմք ընդունելով «ԵՐԻՑՈՒԿ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հատակագիծը :

2. Հաշվի առնելով, որ ինքնակամ այգետնակը, աստիճանավանդակները, հենապատերը և պարիսպները կառուցվել են 2001 թվականի մայիսի 15-ից առաջ ինքնակամ շինության օրինականացման համար վճար չի գանձվում:

3. Պարտավորեցնել նրան համայնքի բյուջե վճարելու ինքնակամ կառուցված՝ 59.79քմ ինքնակամ ծածկերի համար, 1քմ-ը 1560 դրամ, ընդամենը 93272 /իննսուներեք հազար երկու հարյուր յոթանասուներկու/ դրամ, որը պետք է [illegible] Աբովյանի ՏԳԲ 900105221213՝ ինքնակամ շինությունների պետ գրանցում, հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ

*03501829*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.`060-28-94-09
էլ.փոստ .` dzorackbyur@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 Հոկտեմբերի 2017 թվականի N 127

## ՄԻՔԱՅԵԼ ԱՐՏԵՄԻ ՏԵՐ-ՂԱԶԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 8.1,10,11,13-րդ կետերի և հաշվի առնելով այն հանգամանքը,որ Միքայել Տեր-Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող, Կոտայքի մարզ Ձորաղբյուր 3-րդ այգեգործական զանգված 15 թաղ. թիվ 17 հասցեում գտնվող հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, ինժեներատրանսպորտային `օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք`

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Միքայել Տեր-Ղազարյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ Ձորաղբյուր այգեգործական զանգված 15 թաղ. թիվ 17 հողամասում ինքնակամ կառուցված` S=9.60քմ «ինքնակամ աստիճան.-ը», S=71.38քմ «ինքնակամ 1-ին հարկը», S=67.48քմ «ինքնակամ 2-րդ հարկը», S=4.28քմ «ինքնակամ բպ-ն», S=67.48քմ «ինքնակամ ձեղնահարկը», S=7.05քմ «ինքնակամ բպ-ն», S=36.10քմ «ինքնակամ լողավազանը», S=2.47քմ «ինքնակամ պարիսպը» և 1 ինքնակամ բացված դուռը համարել օրինական` հիմք ընդունելով «Գույքագրում» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հատակագիծը:

2. Պարտավորեցնել նրան համայնքի բյուջե վճարելու 227.27քմ ինքնակամ աստիճան.-ի, 1-ինհարկի, 2-րդ հարկի, բպ-ների և ձեղնահարկի համար, 1քմ-ը 2600 դրամ, ընդամենը`590902 /հինգ հարյուր իննսուն հազար ինը հարյուր երկու/ դրամ, 36.10քմ ինքնակամ լողավազանի և 2.47 ինքնակամ պարսպի համար համար` 1քմ-ը 1560 դրամ` ընդամենը 60170 /վաթսուն հազար հարյուր յոթանասուն/ ՀՀ դրամ և 1 ինքնակամ բացված դռան համար 2600 /երկու հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ:

3.Գումարը պետք է փոխանցվի Ձորաղբյուրի համայնքապետարանի, Աբովյանի ՏԳԲ, 900105221213` ինքնակամ կառույցների պետ գրանցում, հաշվեհամարին:

4. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 30-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Ա. ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ջորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.`060-28-94-09
էլ.փոստ .` dzorackbyur@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«03» Հոկտեմբերի 2017 թվականի N 128

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով`

Որոշում եմ

Մանուկ Արարատի Կիրակոսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջորաղբյուր գյուղի կենցաղի տանը և կից հողամասին տրամադրել հասցե` Կոտայքի մարզ գյուղ Ջորաղբյուր Ազատության փողոց թիվ 120/1:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` Ա.Վ.ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.՝060-28-94-09
էլ.փոստ.՝ dzorackbyur@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«03» Հոկտեմբերի 2017 թվականի N 129

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով՝

Որոշում եմ

Համայնքային սեփականություն հանդիսացող 0.9596հա բնակավայրի նշանակության հողակտորին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ գյուղ Ձորաղբյուր Լուսավորության փողոց 3-րդ նրբ. 1-ին փկղ. թիվ 8:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.Վ.ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ջորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.՝060-28-94-09
էլ.փոստ .՝ dzorackbyur@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

03 Հոկտեմբերի 2017 թվականի N 130

## ԾԽԱԽՈՏԻ , ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.,,Լյուդմիլա Գրիգորյան,, ԱՁ-ին տալ ծխախոտի, ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն 2017 ապրիլի 1-ից 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ժամանակահատվածի համար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.Վ.ՍՈՒՔԻԱՅԵԼՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.՝060-28-94-09
էլ.փոստ .՝ dzorackbyur@mail.ru

### ՈՐՈՇՈՒՄ

03 Հոկտեմբեր 2017 թվականի N 131

### ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌ, ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով՝

Որոշում եմ

1. Տեղական ինքնակառավարման մարմինների 2017 թվականի նոյեմբերի 05-ին կայանալիք հերթական ընտրություններին համայնքի տարածքում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր փակցնելու համար առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1/ Ազատության փողոց թիվ 21,

2/ Լուսավորության փողոց թիվ 10:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Մանվել Շահգելդյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. Վ. ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.՝060-28-94-09
էլ.փոստ .՝ dzorackbyur@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

05 Հոկտեմբերի 2017 թվականի N 132

ԾԽԱԽՈՏԻ , ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.,,Մարինե Կիրակոսյան,, ԱՁ-ին տալ ծխախոտի, ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն 2017 հունվարի 1-ից 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ժամանակահատվածի համար

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.Վ.ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ